Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վեղի քաղաքի Խ. Սողոմոնյանի անվան հ. 2 հիմնական դպրոց

Թեմա՝ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Վերապատրաստող, մենթոր՝ Հասմիկ Չարխչյան

Ուսուցիչ՝ Հայրապետյան Գոհար

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ և ՃԱՇԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները որպես ճանաչողական գիտելիքների հարստացման ուղի…… 4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…… 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ…… 19

ՀԱՎԵԼՎԱԾ…… 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժողովրդական բանահյուսությունը երեխայի համար ազգային մտածողության և ոգու անարատ աղբյուր է, ուստի բանահյուսական

տարրերի ուսուցումն իր ուրույն տեղը պետք է զբաղեցնի տարրական դպրոցի ծրագրում:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները կարևոր նշանակություն ունեն կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում և իրենց ուրույն տեղը պետք է զբաղեցնեն մայրենի լեզվի դասագրքերում, քանի որ դրանք նպաստում են կրտսեր դպրոցականի աշխարհաճանաչողական գիտելիքների հարստացմանը, տրամաբանական մտածողության զարգացմանը, խոսքի զարգացմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը, գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններն իրենց ժանրային առանձնահատկություններով յուրահատուկ տեղ են գրավում տարրական դասարան-ների մայրենի լեզվի դասընթացում: Այսօր ժողովրդական մանրապատում ստեղծա-գործությունների ուսուցումը չափազանց կարևոր է թե՛ նրանց գեղարվեստական արժեքի, թե՛ ճանաչողական և դաստիարակչական նշանակության, թե՛ պատկե-րավոր խոսքի ձևավորման և թե՛ տրամաբանական մտածողության զարգացման առումներով: Այս առումով թեման մշտապես հետաքրքրական ու արդիական է:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսուցման առանձնահատկությունները և գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության ձևավորման հնարավորությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

ա. ուսումնասիրել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ընդգրկումը տարրական դասարանների մայրենի լեզվի դասագրքերում.

բ. ներկայացնել կրտսեր դպրոցում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսուցման առանձնահատկությունները՝ պայմանավորված դրանց ժանրային առանձնահատկություններով.

գ. վեր հանել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների կրթադաստիրակչական և ճանաչողական արժեքը.

դ. ուսումնասիրել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների միջոցով գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության առաջացման հնարավորությունները:

Հետազոտության վարկածը: Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ճանաչողական և գեղարվեստական արժեքների շուրջ նպատակային աշխատանք իրականացնելու դեպքում տարրական դասարնի սովորողների մոտ հետաքրքրություն կձևավորվի դեպի գեղարվեստական խոսքը:

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն են մանկավարժական,

գիտամեթոդական գրականության վերլուծության, առարկայական ուսումնամեթոդական ձեռնարկների քննական վերլուծության, գործունեության արդյունքների ուսումնասիրման, սեփական փորձի վերլուծության, դիտման մեթոդները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքը կարող է նպաստել մի կողմից՝ տարրական դասարաններում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների դասավանդման գործընթացն էլ ավելի բազմակողմանի և արդյունավետ դարձնելուն, մյուս կողմից՝ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների զանազան տեսակները ուսումնական տարաբնույթ աշխատանքներում տեղին և նպատակային գործածելուն:

Աշխատանքի կառուցվածքը: Ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1 . ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները որպես ճանաչողական գիտելիքների հարստացման ուղի

Հանելուկների աշխարհաճանաչողական արժեքը և ուսուցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում

Ցանկացած ուսումնական գործունեություն ծավալելիս աշակերտներն իրականացնում են համեմատելու, հակադրելու, էականը գտնելու, ընդհանրացնելու և մասնավորելու տրամաբանական տարրական գործողություններ, որոնք պահանջում են կարևոր առաջնային կարողություններ: Նկատի առնելով այդ գործողությունների դերը աշակերտների գործունեության բոլոր ձևերում (խաղ, ուսում, աշխատանք) և այլն, որ դրանց ձևավորումը բավականին բարդ գործընթաց է՝ մայրենիի դասագրքերում զետեղված են նաև հանելուկներ:

Հանելուկները հարուստ են հակադրություններով ու համեմատություններով և մի առարկայի կամ երևույթի համեմատումը մյուսի հետ աշակերտին օգնում է տեսնելու ծանոթ առարկաների կամ երևույթների նոր կողմերը, պատկերացնելու անծանոթ առարկաների կամ երևույթների նոր կողմերը: Ուսուցչի բացատրությունները դրանք դարձնում են մատչելի և մտապահվող: Իրենց շրջապատող առարկաների և երևույթների մասին աշակերտների ունեցած նախնական տեղեկությունները, անշուշտ, սուբյեկտիվ են. հանելուկի գուշակման և մասնավորապես հորինման գործընթացում աշակերտները կատարում են որոնողական ճանապարհով իրենց գիտելիքները հարստացնելու, իրենց շրջապատող աշխարհն ամբողջությամբ և օբյեկիվորեն տեսնելու ուղղությամբ պարզ փորձեր, ծանոթանում են իրենց շրջապատող իրերի և երևույթների էական հատկանիշներին, սովորում են դրանք զանազանել միմյանցից՝ ուսուցման գործընթացում պասիվ ընկալողի դերը փոխելով ակտիվ մասնակցի դերով՝ կատարելով վերլուծական աշխատանք: Դասի ժամանակ հանելուկն օգտագործվում է թե՛ որպես նոր նյութի հաղորդման, թե՛ աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամփոփման միջոց, թե՛ որպես դասին հետաքրքրաշարժություն հաղորդող հնար: Հանելուկի միջոցով կարելի է հաղորդել գիտելիքներ բառի ուղիղ և փոխաբերական իմաստների, տարաբնույթ առարկաների և երևույթների մասին, ձևավորել բառիմաստը բացատրելու, համեմատելու կարողություն, նպաստել ընդհանրացնող անունների վերաբերյալ գործնական գիտելիքների ձեռքբերմանը:

Երեխաների խոսքի թերությունները հաճախ կապված են այն բանի հետ, որ աշակերտները չեն կարողանում խոսքով դիտարկել այն, ինչի մասին խոսում են կամ գրում, առանձնացնել այն կարևորները, մասնավորները, որոնց բնութագրումից էլ

կազմված է առարկայի ամբողջական նկարագիրը: Հանելուկների հյուսումը առարկան և երևույթը գեղարվեստորեն նկարագրելու կարողության մշակման հետաքրքրաշարժ աշխատանքի ձև է:

Հանելուկի հետ կապված յուրաքանչյուր աշխատանք իրականացնելիս կարևոր է հաշվի առնել այդ գործընթացի մեթոդական բոլոր յուրահատկությունները:

Մինչև առաջադրանքի կատարմանն անցնելը անհրաժեշտ է երեխաներին բացատրել հանելուկի գուշակման հնարը, աշակերտները պետք է յուրացնեն, որ հանելուկը բառի իմաստի բացատրությունն է՝ այլաասացության՝ այլ ձևով ասելու ճանապարհով: Այդ նպատակով հարկավոր է ցույց տալ, թե ինչպես միևնույն երևույթի կամ առարկայի մասին հնարավոր է խոսել տարբեր ձևերով՝ հակիրճ (լուծումը) և մանրամասն(հանելուկը): Շահեկան է նաև համադրել բառիմաստի բացատրությունը և տվյալ առարկայի մասին հանելուկը, որը ներկայացված է այդ բառերով:

Մինչը հանելուկի հորինման և նրա պատասխանի գուշակման կարողության մշակումը առաջարկում ենք կազմակերպել <<Հրաշալի պարկ>> խաղը: <<Հրաշալի պարկը>> կտորից կարված մի փոքրիկ տոպրակ է, որը զարդարված է հեքիաթային հրաշալի գույներով և պատկերներով: Նրա մեջ ուսուցիչն իր հայեցողությամբ լցնում է տարբեր առարկաներ (ըստ նպատակի): Սկզբում խաղավարի դերում հանդես է գալիս ուսուցիչը: Նա ձեռքը մտցնում է պարկի մեջ և հանելուկային ոճով ասում. << Իմ ձեռքում գտնվում է մի առարկա, որը կլոր է, կոշտ կեղևով, որի մեջ լի են թթվաշ, կարմիր հատիկներ: Ասացե՛ք՝ ի՞նչ միրգ է այն>>: Այսինքն՝ ուսուցիչը որքան էլ հանելուկային ոճով է ներկայացնում առարկան, այնուամենայնիվ, նրա կարևոր հատկանիշներից մեկը նշում է ՝ միրգ է, որպեսզի աշակերտները ճիշտ ուղղությամբ մտածեն: Այնուամենայնիվ նույն աշխատանքը տարվում է որպես գուշակման օբյեկտ ընտրելով տարբեր առարկաներ, մինչև որ աշակերտները սովորում են խաղի լեզուն և ոճը: Այդ ճանապարհով աշակերտները յուրացնում են ստեղծագործության այս տեսակի՝ հանելուկի կառուցվածքը: Այս աշխատանքը կատարելիս աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել այն հանգամանքի վրա, որ և՛ բառիմաստի բացատրության մեջ, և՛ պարկի առարկաները ներկայացնելիս նշվում են այդ առարկաների էական հատկանիշները, մասնավորապես այն մեկը, այն էականն ու

կարևորը, որը հատուկ է միայն ու միայն նրան: Դասի այն հատվածը, որը նվիրված է հանելուկների գուշակման հնարի ծանոթացմանը, կարող է կառուցվել բառի նշանակության և առարկայի գեղարվեստորեն նկարագրման հիման վրա:

Այսպիսով՝ բազմաթիվ հանելուկներ գուշակելով և վերլուծելով երեխաները եզրակացնում են, որ՝

- Մտապահված առարկայի անունը(որը պետք է գուշակվի) հանելուկի մեջ չի օգտագործվում,
- Նկարագրվում են առարկայի ակնառու հատկանիշները, որոնցով կարելի է ճանաչել առարկան,
- հանելուկը կառուցվում է համեմատության հիման վրա,
- հանելուկը հիմնականում ունի բանաստեղծության ձև:

Հանելուկների հորինման ուղղությամբ պիտի տրվեն տնային հանձնարարություններ: Այդ ուղղությամբբ նախ պետք է տանել նախապատրաստական աշխատանք՝

1. որոշել հանելուկի օբյեկտի և իրեն քաջ հայտնի առարկայի ակնառու նմանությունները, ընդհանրությունները,
2. կազմել համեմատություն ներկայացնող նախադասություններ,
3. կառուցել փոխաբերություններ (բառն օգտագործել փոխաբերական իմաստով),
4. ստեղծած նկարագրական բնագիրը դարձնել բանաստեղծություն:

Որևէ առարկայի մասին հանելուկ հորինելու ուղղությամբ տրված առաջադրանքը կատարելիս երեխաները պետք է հիշեն, որ հանելուկը պետք է.

- ունենա միայն մեկ լուծում (պատասխան),
- կարճ, հակիրճ լինի,
- առարկան ներկայացվի դիպուկ բառերով,
- ունենա բանաստեղծության ձև:

Այնպիսի հանելուկները, որոնք ունեն մի քանի լուծում, ճիշտ չեն: Սովորաբար երեխաների կազմած առաջին հանելուկիները հենց այդպիսին են լինում: Սակայն դրա համար չի կարելի դիտողություն անել: Անհրաժեշտ է երեխաների կազմած յուրաքանչյուր հանելուկ գուշակել, իսկ գուշակելիս դասարանում կհնչեն տարբեր

պատասխաններ: Հենց դրանց վերլուծության միջոցով էլ կարելի է կատարել մեկնաբանություններ և ցույց տալ հանելուկի այդ կարևոր առանձնահատկությունը՝ հիմք ընդունելով հանելուկի բովանդակային և հանրային յուրահատկությունները, կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման մակարդակը, նրանց երևակայության թռիչքի անսահմանությունն ու յուրօրինակությունը:

Օրինակ՝դիտարկենք Խաղ- հանելուկի տվյալ նմուշը:



Սա ոչ միայն հանելուկ է, այլև լեզվական խաղ-առաջադրանք. լեզվական աշխատանքի արդյունքում երեխաները բառակազմական կամ հնչյունային վերլուծություն են կատարում և բառեր կազմում, գուշակում:

Հանելուկների ուսուցումն ունի բազմաբնույթ նշանակություն. այն ոչ միայն սովորեցնում է տրամաբանել, համեմատել, զուգադրել, հակադրել, ընդհանրացնել և այլն, այլև հատկանիշները առարկաներին վերագրել, այսինքն՝ ունեցած կամ նոր ձեռք բերած ճանաչողական գիտելիքները գործադրել, հարստացնում է երեխայի աշխարհաճանաչողական գիտելիքները: Դրանք բոլորը գեղարվեստական խոսքի գողտրիկ նմուշներ են, որոնք ոչ միայն ունեն ճանաչո-ղական արժեք, այլև մեծապես կարող են նպաստել գեղագիտական ճաշակի ձևավորմանը և մայրենի լեզվի ուսուցման լավագույն օրինակներ դառնալ:

Շուտասելուկների և առտասելուկների ուսուցման անհրաժեշտությունն ու նպատակները կրտսեր դպրոցում, դրանց ճանաչողական արժեքը

Շուտասելուկներն ավելի շատ օգտագործում են առաջին դասարանում, մասնավորապես գրաճանաչության շրջանում՝ երեխաների հնչյունային լսողության զարգացման և արտասանական թերությունների շտկման նպատակով:

Շուտասելուկը նախ պետք է շատ սահուն և արագ կարդալ սովորեցնել, ապա պահանջել՝ որքան հնարավոր է արագ արտասանել:

Դրանք նաև չափազանց աշխուժացնում են երեխաներին, բարձրացնում դասարանի տրամադրությունը, ստեղծում են անմիջական, անկաշկանդ մթնոլորտ:

Հետաքրքիր և զվարճալի է նաև *սուտասելուկների* օգտագործումը դասի ժամանակ: Դրանք զարգացնում են երեխաների ուշադրությունը, ձևավորում հումորի զգացում, սրամտություն:[4, էջ 151] Օրինակ՝

Մաղով միսը աղացի, մսաղացով՝ ալյուրը:

Ու ճոխ սեղան բացեցի, երբ պատրաստ էր ապուրը:

Որդիս կերավ՝ հավանեց, ասաց. <<Համեղ ճաշ է սա,

Վաղն էլ կեփե՞ս մի կաթսա ձմերուկով հարիսա>>:

Սուտասելուկներն ընթերցելուց հետո աշակերտներին պիտի առաջարկվի գտնել, թե ինչ շփոթմունք է տեղի ունեցել և սպասել, որ երեխաները գտնեն բոլոր սխալները որ սրտանց երեխաների հետ հրճվել այդ շփոթմունքի առթիվ:

Շուտասելուկները երեխաների արտասանական օրգանները վաժեցնելու, նրանց լեզուն ու խոսքը ժողովրդական ոճին հարմարեցնելու, նրանց մայրենի լեզվի հնչյունային գեղեցկության նկատմամբ վերաբերմունք մշակելու նպատակ են հետապնդում: Շուտասելուկներն ու սուտասելուկները հաճախ նաև ճանաչողական գիտելիքներ են հաղորդում կամ նպաստում դրանք ամրապնդելուն, ստուգելուն ու գործնականում կիրառելուն:

Շուտասելուկը տեղեկություն է տալիս այն մասին, որ գյուղերում կարագը պահում են մարագում, այնտեղ պահում են նաև այլ ուտելիքներ ձմեռվա համար:

Վարա՛գ գնա՛, մարագ, արի՛,

Արա՛գ գնա մարագ, արի՛,

Թե մարագում կարագ գտար,

Կարագը ա՛ռ արա՛գ արի:

Սուտասելուկները ևս ունեն ճանաչողական արժեք, սակայն ի տարբերություն հանելուկների, որտեղ տրվում է ճիշտ ինֆորմացիա, սուտասելուկներում տրվում է սխալ՝ <<սուտ>> ինֆորմացիա, երեխան ոչ միայն պետք է ընկալի ինֆորմացիան, այլև հիշի տվյալ առարկայի իրական հատկանիշները, համեմատի և վերլուծական

աշխատանքի շնորհիվ հանգի այն եզրակացության, որ գործ ունի սուտասելուկի հետ: Սուտասելուկի վերլուծությունն առաջին հայացքից թվում է պարզ աշխատանք, սակայն իրականում այն տրամաբանական վերլուծական լուրջ աշխատանք է երեխայի համար և ճանաչողական գիտելիքների ամրապնդման ու կիրառության չափազանց հետաքրքրական եղանակ:

Սուտասելուկների շուրջ կատարված նպատակաուղղված և մեթոդապես ճիշտ աշխատանքը ոչ միայն ճանաչողական գիտելիքների ամրապնդման և ընդհանրացման, այլև տրամաբանական մտածողության զարգացման հնարավորություն է ընձեռում, զարգացնում երեխաների վերլուծական համադրական աշխատանք կատարելու կարողությունները: Դրանք մեծ հետաքրքրություն են առաջացնում դասի ժամանակ, երեխաներին մղում պրպտելու իրենց գիտելիքներն ու պատկերացումները, ճանաչելու աշխարհը, անհայտ ու հայտնի երևույթները:

Այսպիսով՝ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները պարունակում են ճանաչողական շատ մեծ ինֆորմացիա: Լինելով դասի անբաժանելի բաղադրիչը՝ դրանք լրացնում են դասի ճանաչողական ու դաստիարակչական բովանդակությունը, նպաստում են դրա ընդլայնմանը, ամրապնդմանն ու կայուն համակարգված գիտելիքների վերլուծմանը:

Շուտասելուկներն ավելի շատ օգտագործվում են առաջին դասարանում, մասնավորապես գրաճանաչության շրջանում՝ երեխաների հնչյունային լսողության զարգացման և արտասանական թերությունների շտկման նպատակներով: [4, էջ 181]

Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի դասագրքերում ընդգրկված շուտասելուկներն ունեն ոչ միայն արտասանական գործարանները մարզելու և հնչյունի արտասանությունն ամրապնդելու նպատակ այլ նաև ճանաչողական արժեք և, որպես կանոն, գեղագիտական արժեք ներկայացնող գողտրիկ ստեղծագործություններ են: Դիտարկենք քննարկվող դասագրքերում տեղ գտած շուտասելուկները և դրանց մատուցման ձևերը կրթական և դաստիարակչական տեսանկյունից:

Էջ 90-ում մատուցված է Յու. Սահակյանի շուտասելուկը, որը ոչ միայն *ճ* հնչյունի արտասանության ուսուցման նպատակ ունի, այլև ճանաչողական գիտելիք

է հաղորդում՝<<ճուտը ճիճու և կուտիկ է ուտում>>, որը ցուցադրվում է կատակային նկարով և, անշուշտ, մի գողտրիկ ոտանավոր է, որը երեխաները մեծ հաճույքով արտասանում են:

Ճու՛տ եմ, ճու՛տ եմ , ճու՛տ եմ, ճու՛տ եմ

Կուտիկ գտա՝ կուտիկ կուտեմ, ճիճու գտա՝ ճիճու կուտեմ:

Եթե ճուտ եմ, ինչու՞ չուտեմ, եթե չուտել ,էլ ի՞նչ ճուտ եմ:

Շուտասելուկը ևս, ինչպես տեսնում ենք, պետք է բավարարի երեխայի տարիքային առանձնահատկություններին ու հետաքրքրություններին ոչ միայն իր բովանդակությամբ, այլև արտասանական առանձնահատկություններով:

Մանրապատում այս ստեղծագործությունները ունեն մի կողմից ճանաչողական, մյուս կողմից՝ տրամաբանության զարգացման արժեք. երեխան նախ՝ ի մի է բերում իր գիտելիքներն առարկայի, երևույթի, բնագավառի վերաբերյալ, ապա՝ տրամաբանական մի շարք գործողությունների արդյունքում՝ համադրության, հակադրության միջոցով վերլուծելով նյութը՝ վեր հանում շփոթը:

Այսպիսով՝ շուտասելուկներն ու սուտասելուկները ունեն ճանաչողական արժեք և ուսումնական գործընթացում դրանք ոչ միայն պետք է մատուցվեն նպատակային ու տեղին, այլև համապատասխանեն երեխայի կարողություններին, լինեն նրա հե-տաքրքրությունների շրջանակում, ունենան գեղարվեստական արժեք: Միայն այս դեպքում դրանք ոչ միայն կհետաքրքրեն նրան, այլև խթան կհանդիսանան նորանոր նյութեր կարդալու միջոցով նոր գիտելիքներ քաղելու և գեղարվեստական խոսքի նկատմամբ ընդհանրապես:

Առածների կրթադաստիարակչական արժեքը և ուսուցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում, դրանք ճանաչողական արժեքը

Առածներում և ասացվածքներում արտացոլված է ժողովրդական կյանքն իր բոլոր սքանչելի առանձնահատկություններով: Նրանցում արտացոլված են կյանքի ու կենցաղի բոլոր կողմերը՝ ընտանիքը, դաշտն ու անտառը, հասարակությունը, նրա պահանջները, ձգտումներն ու սովորությունները, նրա հայացքը բնության, մարդկանց գործունեության ու կյանքի տարբեր երևույթների վերաբերյալ: Դրանց միջոցով ժողովուրդը ձաղկել է չարն ու վատը, սովորել է բարին ու լավը: Դարեր

շարունակ ասացվածքներն ու առածները յուրահատուկ ավանդներ են եղել, ուստի շատ մեծ է դրանց բարոյադաստիարակչական և աշխարհաճանաչողական արժեքը:

Որքան էլ առածներն ու ասացվածքները պարզ ու հասկանալի են թվում, այնուամենայնիվ, իրենց մեջ բացատրելու, երեխաներին հասկացնելու որևէ բան ունեն:

Ըստ բովանդակության, ձևի ու ծավալի՝ ասացվածքներն ու առածները նման են իրար, սակայն էականորեն տարբերվում են միմյանցից: Առածը այլաբանական ատեղծագործություն է, որի բուն միտքն արտահայտված է անուղղակի կերպով, ասացվածքն իրականությունը դրսևորում է ուղղակի ձևով՝ առանց որևէ այլաբանության, ուստի դրանք ունեն նաև ուսուցման որոշակի տարբերություններ: [19, էջ 150-151]

Առածներն ու ասացվածքները <<*Մայրենի 2*>> դասագրքում տրվում են բնագրից հետո՝ սեղմ կերպով արտահայտելով այդ բնագրի գաղափարական բովանդակությունը

- *Ինչքան իմանաս, մի՛ ասա՝ բավ է, թե շատ իմանաս՝ ավելի լավ է:*
- *Գիտելիքը ուժ է:*
- *Գիտությունը մարդու ամենալավ օգնականն է:*
- *Կյանքում խելքն ավելի կարևոր է, քան ուժը:*

Ասացվածքների այս խումբը տրված է <<Դու մեր դպրոց սիրելի>> թեմայի վերջում: Ասացվածքները որպես թեմայի ամփոփում, ցույց են տալիս երեխային գիտելիքի կարևորությունը մարդու կյանքում, գիտելիքը որպես ուժ, դրա անսահման անհրաժեշտությունը: Ընդունելով գիտելիքի կարևորությունը մարդու կյանքում, երեխաները գիտակցում են, որ շատ գիտելիքներ ստանալու և ուժեղ լինելու համար անհրաժեշտ է լավ սովորել, սիրել գիրքն ու դպրոցը:

- *Գիրքը մեր լավագույն բարեկամն է*
- *Գիրքն անսահման հարստություն է:*
- *Ամենալավ խաղալիքը միտքն է, ամենալավ ուղեկիցը գիրքն է:*

Ասացվածքների այս խումբը տրվում է <<*Դու մեր դպրոց սիրելի*>> թեմատիկայի ամփոփման ժամանակ: Սրանք նշում են գրքի կարևորությունը մարդու կյանքում: ●*Աշխարհի մեջ ամեն ինչ կարող ես ձեռք բերել՝ բացի ծնողներից:*

Այս ասացվածքը ինչպես դաստիարակչական, այնպես էլ ճանաչողական նշանակություն ունի: Մարդը կյանքում կարող է ամեն ինչից մի քանիսն ունենալ (տատիկներ, պապիկներ, քույրիկներ, ընկերներ), բայց հայրը և մայրը միակն են յուրաքանչյուրի կյանքում:

● *Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հազար ու մին:*

● *Ով իր մեծի խրատը լսի, իր գործերի մեջ միծտ կհաջողի:*

Այս երկու ասացվածքները տրվում են Վ. Աթրեի <<*Մայրիկի հաշիվը*>> բնագրից հետո, հետևաբար արտահայտում են այդ բնագրի գաղափարական բովանդակությունը: Հիմնականում սրանք դաստիարակչական նշանակություն ունեն, սովորեցնում են լինել ծնողների խրատները լսող, հասկացող: Այս կապակցությամբ երեխաների հետ կարելի է նաև զրույց անցկացնել Աստծո պատվիրանների մասին և առանձնացնել հատկապես հորն ու մորը պատվելու մասին պատվիրանը, որը համահունչ է ոչ միայն այս թեմային, այլև հրաշալի ամփոփիչ նյութ կլինի ամփոփման դասի համար. <<*Պատվի՛ր հորն ու մորը, որպեսզի քո օրերը երկար լինեն այն երկրի վրա, որ քո Տեր Աստվածը կտա քեզ*>>: Կարծում ենք, որ Աստվածաշնչյան խրատների գործածությունը ևս հրաշալի միջոց է ոչ միայն դաստիարակչական աշխատանք իրականացնելու, այլև դասանյութերի գաղափարական բովանդակությունը և դրանց խրատական արժեքը վեր հանելու և առավել հնչեղ ու ազդեցիկ դարձնելու, երեխաներին խորհել սովորեցնելու, իրենց արարքները գնահատել տալու առումով:

- *Պատերազմը չարիք է:*

Այս ասացվածքը տրվում է Պ. Խաչատրյանի <<*Իմ հերոս պապը*>> ոտանավորից հետո,որտեղ թոռնիկը նայում է պապի նկարին և պատմում, որ նա ընդամենը քսան տարեկան հասակում զոհվել է պատերազմի ժամանակ, և եթե պատերազմ չլիներ, ինքը նույնպես պապիկ կունենար: Ասացվածքն ունի ճանաչողական ու դաստիարակչական շատ մեծ նշանակություն:Այն սովորեցնում է, որ պատերազմ են գնում հայրենիքին օտարներից պաշտպանելու համար, սակայն պատերազմը չարիք է, որովհետև այն խլում է մարդկանց կյանքը: Այս ասացվածքները տրվում են <<*Մեր տունը*>> թեմայի ուսուցման ընթացքում: Այս ամենը ճանաչողական շատ մեծ ու կարևոր նշանակություն ունի, որը մարդը պետք է իմանա վաղ հասակից:

● *Նա, ով ծառ է տնկում, իրենից բացի ուրիշին էլ է սիրում:*

Այս ասացվածքը ուսուցանվում է Ա. Պարսամյանի <<*Ծառատունկ*>> ոտանավորից հետո (թեմա՝ <<*Լավ և բարի գործեր*>>): Ինչպես գիտենք, ծառերի տերևները կլանում են ածխաթթու գազը և մարդկանց տալիս են թթվածին, մաքրում են օդը վնասակար նյութերից: Այն կերակրում է, կարող է լինել պտղաբեր, հետևաբար՝ նա, ով ծառ է տնկում, օգուտ է տալիս ոչ միայն իրեն, այլև՝ ուրիշներին: Ուներ շատ մեծ ճանաչողական արժեք:

Առածն ու ասացվածքը առավելապես դաստիարակչական արժեք ունեն, սակայն նախքան դաստիարակչական բովանդակության բացահայտումը, կա մեկ ուրիշ՝ ճանաչողական շերտ, որն ուսուցիչը պետք է բացահայտի և որի միջոցով պետք է երեխային հանգեցնի խրատական գաղափարին: Դա պետք է լինի դասանյութի հետ կապ ստեղծելու, իրականությունը վերլուծելու, երեխայի արդեն ունեցած գիտելիքը վեր հանելու և արժևորելու ճանապարհով: Ընդ որում՝ եթե ասացվածքի ճանաչողական կողմն ընկած է մակերեսին, ապա առածի դեպքում ավելանում է վերլուծական աշխատանքի ևս մի շերտ՝ վերաիմաստավորումը բացահայտելու խնդիրը: Ուրեմն՝ ուսուցիչը չպետք է զլանա այս ստեղծագործությունների ուսուցման ժամանակ և կատարի լուրջ վերլուծական աշխատանք:

Առածները կամ ասացվածքները դասանյութից կարող են տրված լինել մեկական կամ փնջով: Դրանցից յուրաքանչյուրն ունի ուսուցման իր նպատակը և յուրահատկությունները: Մեր դիտարկուները ցույց են տվել, որ եթե տրված է լինում մեկ առած կամ ասացվածք, ապա ցանկալի է, որ այն շատ ստույգ կապված լինի դասի բովանդակության հետ և անմիջականորեն լինի դասի գաղափարի բանաձևում: Այդ դեպքում այն շատ կոնկրետ՝ գիտակցվում և շատ կոնկրետ է ասոցացվում մեկ այլ իրավիճակի հետ և շուտ է մտաբերվում:

Առածների կամ ասացվածքների փնջով մատուցումը հնարավորություն է տալիս ավելի լայն դիտարկելու դասի գաղափարական կողմերը, դրանք բացահայտելու և գնահատելու տարբեր կողմերից, առավել սպառիչ վերլուծելու և քննարկելու դասի դաստիարակչական ու բովանդակային արժեքը: Այդպիսի մոտեցումը կսովորեցնի երեխային բազմակողմանիորեն նայել, դիտարկել հարցը և պատճառահետևանքային կապեր գտնել տարբեր խնիրների միջև:

Ասացվածքն այլաբանական իմաստ չունի, նրանում արտահայտված միտքն ուղիղ է ասված: Օրինակ՝

- *Ուշ լինի՝ նուշ լինի:*
- *Լավ է գիտունին գերի, քան անգետին՝ սիրելի:*
- *Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:*
- *Ով աշխատի, նա կուտի:*
- *Լավ ընկերը նեղության պահին է երևում:*

Մեր կարծիքով այսպիսի մոտեցման դեպքում ասացվածքը երեխայի կողմից ավելի լավ է յուրացվում:

Առածներն ու ասացվածքները թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ, թե՛ լեզվաոճական կողմով իրար շատ են նման, սակայն բնույթով տարբեր են: Այս տարբերությունը երեխաներին ընկալելի պետք է դարձնել գործնական ճանապարհով՝ առանց տեսական բացատրությունների: Պարզապես պետք է սովորեցնել գործնականորեն զանազանել առածներն ու ասացվածքները, հանելուկներն ու շուտասելուկները:

Այսպիսով՝ առածներն ու ասացվածքները մայրենի լեզվի դասագրքերում զետեղված են լինում գեղարվեստական ստեղծագործությունների հետ միասին՝ որպես լրացուցիչ նյութ, և պարզաբանում են բնագրի այս կամ այն միտքը՝ հիմնականում կապված լինելով ստեղծագործության գաղափարի կամ ենթատեքստի հետ:Երբեմն առածներն ու ասացվածքները կարելի է բացատրել նաև առակներով, որովհետև դրանք մեծ մասամբ խտացված առակներ են և ընդհանրացված ձևով՝ առանց կերպարների ու գործողությունների, արտահայտում են բարոյախրատական այն նորմերը, ինչ որ առակներում է տրված: Եթե առածն ու ասացվածքը օգնում են ճիշտ հասկանալու առարկաների վերացական գործընթացները, ապա առակներն էլ կարող են օգնել հասկանալու առածների ու ասացվածքների կոնկրետ բովանդակությունը: Առածներն ուսուցանելիս պետք է ուշադրություն դարձնել դրանց գեղարվեստական կողմի վրա: [19, էջ 155]

Այսպիսով՝ առածներն ու ասացվածքները՝ որպես ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուրույն տեսակներ, իրենց ճանաչողական՝ կյանքի ճանաչողության և բարոյախրատական բովանդակությամբ

կարևոր տեղ են զբաղեցնում կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում և անպայման պետք է տեղ գտնեն մայրենի լեզվի դասագրքերում: Դրանք ունեն ուսուցման իրենց յուրահատկությունները, որոնք պետք է հաշվի առնվեն թե՛ դասագրքերի կազմության ժամանակ, և թե՛ ուսուցման գործընթացում:

Այսպիսով՝ առածներն ու ասացվածքները՝ որպես ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուրույն տեսակներ, իրենց բարոյախրատական բովանդակությամբ կարևորագույն տեղ են զբաղեցնում կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում, զարգացնում են աշխարհաճանաչողությունն ու գեղագիտական ճաշակը: Այսպիսով՝ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների տեսակներից յուրաքանչյուրն իր ուրույն տեղն ունի մայրենիի դասընթացում և որոշակի կարողություններ զարգացնում երեխայի մեջ: Սակայն դրանք նախևառաջ գրական ստեղծագործություններ են՝ իրենց ժանրային առանձնահատկություններով, ազգային մտածողության կնիքը կրող գրական երկեր, որոնք ունեն գրական-գեղարվեստական արժեք և մայրենիի դասընթացում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այս կողմին և երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել ոչ միայն դրանց նկատմամբ, այլև դրանց միջոցով՝ գրականության նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում անփոխարինելի դեր են կատարում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները: Դրանք գրական-գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ժանրային առանձնահատկությունները և գաղափարական, բարոյախրատական կամ ճանաչողական արժեքը՝ իր կրթական և դաստիարակչական ուղղվածությամբ դառնալով կրտսեր դպրոցի մայրենի լեզվի ծրագրի կարևորագույն բաղադրիչը: Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները՝ առածները, ասացվածքները, հանելուկները, շուտասելուկները, սուտասելուկ-

ները մեծ թիվ են կազմում մայրենի լեզվի դասագրքերում՝ տրվելով որպես լրացուցիչ կամ օժանդակ նյութեր, որոնք պարզաբանում են բնագրերի, այսինքն՝ դասանյութերի այս կամ այն կողմը և խորացնում ու ամբողջացնում են վերջիններիս հիմնական գաղափարը: Դրանցից յուրաքանչյուրն ունի ուսուցման իր նպատակներն ու մեթոդները, որոնք դասավանդման գործընթացում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել ու կիրառել՝ կարևորելով նաև դրանց գեղարվեստական-գրական արժեքը և երեխաների մեջ սեր ու հետաքրքրություն առաջացնելով դրանց նկատմամբ , իսկ դրանց միջոցով գեղարվեստական խոսքի նկատմամբ:

1. Առածներն ու ասացվածքները՝ որպես ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուրույն տեսակներ, իրենց ճանաչողական և բարոյախրատական բովանդակությամբ կարևոր տեղ են զբաղեցնում կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում և անպայման պետք է տեղ գտնեն մայրենի լեզվի դասագրքերում: Դրանք ունեն ուսուցման իրենց յուրահատկությունները, որոնք պետք է հաշվի առնվեն թե՛ դասագրքերի կազմության ժամանակ, և թե՛ ուսուցման գործընթացում: Դասագրքերում մատուցվում են դասանյութերից հետո և ուսուցման գործընթացում պետք է սերտորեն կապվեն վերջիններիս գաղափարական բովանդակության հետ՝ դառնալով դրանց հակիրճ ու պատկերավոր ամփոփումը: Առածասացվածքների ուսուցումը իրադրությունից, այն է՝ դասանյութից դուրս, պարզապես ինքնանպատակ է և չի կարող անհրաժեշտ արդյունք տալ: Առածներն ուսուցանելիս պետք է ուշադրություն դարձնել դրանց գեղարվեստական կողմի վրա:

Թեև առածների և ասացվածքների ուսուցումը մեթոդիկայում մատուցվում է միասին, քանի որ դրանք մոտ են իրենց ժանրային առանձնահատկություններով, ուսուցման նպատակներով ու խնդիրներով, այնուամենայնիվ դրանք ունեն նաև տարբերություններ՝ պայմանավորված այլաբանական իմաստի առկայությամբ կամ բացակայությամբ, որոնք չի կարելի հաշվի չառնել ուսումնական գործընթացում:

2.Հանելուկը առարկայի կամ երևույթի ցայտուն և բնութագրական հատկանիշների սեղմ և պատկերավոր նկարագրությունն է, որն ունի մի կողմից՝ տրամաբանական մտածողության զարգացման, մյուս կողմից՝ աշխարհաճանաչողական գիտելիքների հարստացման նշանակություն: Նպաստելով կրտսեր դպրոցականի՝

համեմատելու, հակադրելու, զուգադրելու և ընդհանրացնելու կարողությունների կատարելագործմանը, հանելուկները նաև չափածո խոսք կառուցելու նախնական կարողությունների ձևավորման միջոց են:

Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի դասագրքերում տեղ գտած բոլոր հանելուկները գեղարվեստական խոսքի գողտրիկ նմուշներ են, որոնք կարող են նպաստել երեխայի գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու խոսքի զարգացմանը:

3. Սուտասելուկները, ինչպես և հանելուկները, ունեն ճանաչողական արժեք և նպաստում են երեխայի աշխարհաճանաչողական գիտելիքների գործադրությանը, սակայն ուսուցման՝ հանելուկներից միանգամայն տարբեր մեթոդական շղթա են պահանջում:

Շուտասելուկները այս կամ այն հնչյունի արտաբերությունը ամրակայելու հիմնական նպատակ ունեն, սակայն քննության առնված դասագրքերում պակաս կարևորված չէ նաև դրանց ճանաչողական արժեքը, ինչը է՛լ ավելի արժեքավոր ու նպատակային է դարձնում շուտասելուկի ուսուցումը կրտսեր դպրոցում:

Շուտասելուկներն ու սուտասելուկները ունեն ճանաչողական արժեք և ուսումնական գործընթացում դրանք ոչ միայն պետք է մատուցվեն նպատակային ու տեղին, այլև համապատասխանեն երեխայի կարողություններին, լինեն նրա հետաքրքրությունների շրջանակում, ունենան գեղարվեստական արժեք: Միայն այս դեպքում դրանք ոչ միայն կհետաքրքրեն նրան, այլև խթան կհանդիսանան նորանոր նյութեր կարդալու միջոցով նոր գիտելիքներ քաղելու և գեղարվեստական խոսքի նկատմամբ ընդհանրապես:

4. Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսուցումը կրտսեր դպրոցում մեծապես նպաստում է աշակերտի՝ հայերեն մտածելու կարողությունների մշակմանն ու կատարելագործմանը և, իհարկե, գեղեցիկ, գրագետ, ու պատկերավոր խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը:

5. Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից յուրաքանչյուրն ունի դասավանդման իր առանձնահատկություններն ու մյուսից տարբերվող մեթոդական շղթան, որոնց իմացությունն ու կիրառումը անհրաժեշտ պայման է

կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացի լավագույն և արդյունավետ կազմակերպման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալստյան Ա. Վ. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանության նյութեր (2-րդ դասարան), -Եր., <<Էդիթ Պրինտ>>, 2010, 143 էջ:
2. Գալստյան Ա. Վ. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանության նյութեր (3-րդ դասարան), -Եր., <<Էդիթ Պրինտ>>, 2010, 143 էջ:
3. Գալստյան Ա. Վ. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանության նյութեր (4-րդ դասարան), -Եր., <<Էդիթ Պրինտ>>, 2010, 143 էջ:
4. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, -Եր., <<Զանգակ>>, 2009, 343 էջ:
5. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր.,<<Զանգակ>>, 2015, 314 էջ:
6. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ., Մայրենի 3 , <<Էդիթ Պրինտ>>, 2018, 160 էջ:
7. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ., Մայրենի 4 , <<Էդիթ Պրինտ>>, 2018, 160 էջ:
8. Գրիգորյան Գ. Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն,-Եր., <<Լույս>>, 1980, 470 էջ:
9. Գրիգորյան Գ., Հանելուկները և դրանց դերը դպրոցականների կյանքում, Նախաշավիղ, 3/2003, 64 էջ:
10. Դոլուխանյան Ա., Հայն ժողովրդական բանահյուսություն, Ուսումնական ձեռնարկ, -Եր., <<Զանգակ>>, 2008, 268 էջ:
11. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, -Եր., 1969, 170 էջ:
12. Պետրոսյան Հ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, -Եր., ՀՀԳԱ, 1975,316 էջ::

13. Ջրբաշյան Էդ., Մախչյան Հ., Գրականագիտական բառարան, -Եր., <<Լույս>>, 1972, 328 էջ:

14. Սարգսյան Վ. Ա., Այբբենարան, -Եր., <<Մանմար>>, 2017, 156 էջ:

15. Սարգսյան Վ. Ա., Մայրենի 1, -Եր., <<Մանմար>>, 2016, 64 էջ:

16. Սարգսյան Վ. Ա.,Կարինե Թ. Ա. և ուրիշներ, Մայրենի 2, -Եր., <<Մանմար>>, 2014, 160 էջ:

17. Սարգսյան Վ. Ա.,Կարինե Թ. Ա. և ուրիշներ, Մայրենի 3, -Եր., <<Մանմար>>, 2014, 160 էջ:

18. Սարգսյան Վ. Ա.,Կարինե Թ. Ա. և ուրիշներ, Մայրենի 4, -Եր., <<Մանմար>>, 2014, 160 էջ:

19. Տեր- Գրիգորյան Ա. Ե., Ընթերցանության մեթոդիկա, Եր., <<Լույս>>, 1978,238 էջ:

20. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Խոսքի զարգացման մեթոդիկա, -Եր., <<Լույս>>, 1974, 275 էջ:

21. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, -Եր., <<Լույս>>, 1980,558 էջ:

22. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Խոսքի զարգացման մեթոդիկա, -Եր., 1974, 283 էջ:

23. Տեր- Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, -Եր., <<Լույս>>, 1980, 563 էջ:

24. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ.Ա., Այբբենարան, -Եր., <<Էդիթ Պրինտ>>, 2009, 121 էջ:

25. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ.Ա., Այբբենարան, Ուսուցչի ձեռնարկ, -Եր., <<Էդիթ Պրինտ>>,2007, 63էջ:

26. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ.Ա., Մայրենի 1 , -Եր., <<Էդիթ Պրինտ>>, 2010, 63 էջ:

27. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ.Ա., Մայրենի 2, -Եր., <<Էդիթ Պրինտ>>, 2007, 160 էջ:

Արտաքին հղումներ

1. http://school.editprint.am/
2. http://happytrain.org/abc/gr/game/index.html

3. https://af.attachmail.ru/cgi-bin/readmsg/2003%283%29.pdf?x-email=ani_sardaryan@bk.ru&rid=358208509244683016428832624003640330619&&id=1553839062000000778;0;1&&x-email=ani_sardaryan%40bk.ru

Հավելված

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ ուսուցիչ, Դուք մասնակցում եք « Կրտսեր դպրոցականների գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության ձևավորումը ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման միջոցով» թեմայով իրականացվող հետազոտական աշխատանքի կատարմանը: Խնդրում ենք տրամադրել մի փոքր ժամանակ. Ձեր օգնությունը շատ կարևոր է: Կանխավ շնորհակալ ենք:

1. Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից որո՞նք են առավելապես հետաքրքրում երեխաներին:

 Առածներ և ասացվածքներ

 Շուտասելուկներ

 Հանելուկներ

 Ոչ մեկը

2. Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից որո՞նք են ա-ռավելապես նպաստում գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը:

 Առածներ և ասացվածքներ

 Շուտասելուկներ

 Հանելուկներ

 Ոչ մեկը

3. Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման /ուսուցման/ գործընթացում ի՞նչ միջոցներով կարելի է զարգացնել կրտսեր դպրոցականի հետաքրքրությունը գեղարվեստական խոսքի նկատմամբ:

_____
_____
_____
_____

4. Կրտսեր դպրոցականի՝ գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության զարգացման, ինչպես նաև նկարագրական, պատկերավոր խոսքի զարգացման նպատակով կիրառո՞ւմ եք արդյոք հանելուկ կամ սուտասելուկ հորինելու առաջադրանքներ. որքանո՞վ է դա նպաստում:

_____
_____
_____
_____

5. Գեղարվեստական ճաշակի և գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության ձևավորման գործընթացում որքանո՞վ է նպաստում նկարազարդումը:

 Շատ է նպաստում

 Քիչ է նպաստում

 Չի նպաստում

6. Որքանո՞վ են ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները նպաստում կրտսեր դպրոցականի գեղարվեստական ճաշակի ձևավորմանը:

 Շատ են նպաստում

 Քիչ են նպաստում

 Չեն նպաստում

7. Մայրենիի դասագրքերում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ընդգրկվածությունը ի՞նչ հնարավորություններ է ստեղծում կրտսեր դպրոցականի գեղարվեստական ճաշակի, հետաքրքրությունների ձևավորման համար։

 լայն հնարավորություններ

 բավարար հնարավորություններ

 սահմանափակ հնարավորություններ

 բոլորովին չի ստեղծում

8. Ժողովրդակա՞ն, թե՞ հեղինակային ստեղծագործություններն են առավել նպաստում գեղարվեստական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը. ինչու՞։

_____
_____
_____
_____

9. Ժողովրդական մանրապատում ստեղծագործության ո՞ր հատկանիշներն են առավելապես նպաստում գեղարվեստական ճաշակի ձևավորմանը. ինչու՞։

_____
_____
_____
_____

10. Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից որո՞նք են առավելապես նպաստում ճանաչողական գիտելիքների հարստացմանը։

 Առածներ և ասացվածքներ

 Շուտասելուկներ

 Հանելուկներ

 Ոչ մեկը

Հարցաթերթիկից ստացվող արդյունքների վերլուծություն

Հիմք ընդունելով ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ազդեցությունը սովորողների խոսքի ձևավորման և զարգացման վրա, փորձել ենք ուսուցիչների շրջանում հարցաթերթիկի միջոցով պարզել այդ ստեղծագործությունների արդյունավետությունը ուսուցման գործընթացում: Հարցաթերթիկում ընդգրկված էր 10 հարց, որոնցից 4-ը բաց հարցեր էին. ուսուցիչներն ընտրելու էին տվյալ պատասխաններից առաջնայինը, 6-ը փակ հարցեր էին. իրենց փորձից ելնելով՝ պետք է ներկայացնեին ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների նշանակությունը: Հարցաթերթիկից ստացված արդյուքների վերլուծությունից երևում է, որ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները մայրենիի դասագործընթացում նպաստում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Հարցաթերթիկում ընդգրկված հարցերում ուսուցիչը պետք է ներկայացներ, թե որքանո՞վ է ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրումը նպաստում գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, ճաշակի և ճանաչողական գիտելիքների զարգացմանը: Հարցման արդյունքում պարզ է դառնում, որ ըստ ուսուցիչների՝ գիտելիքներ ձեռք բերելու, ձեռք բերվող գիտելիքները կարևորելու, նյութի յուրացումը արդյունավետ դարձնելու, ուսուցանվող նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելու, մայրենիի ծրագրի բազմաթիվ խնդիրներ լուծելու (խոսքի զարգացում, արժեհամակարգի ձևավորում և այլն), դասն ավելի հետաքրքիր և աշխույժ դարձնելու տեսանկյուններից ուսուցման գործընթացում ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների շնորհիվ մեծանում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Այն նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Ուսուցիչների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ նրանք գիտակցում են ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների կարևորությունը մայրենիի դասագործընթացում՝ որպես դասի արդյունավետության բարձրացման կարևոր միջոց:

Առաջին հարցով նպատակ ունեինք պարզելու, թե ըստ իրենց՝ հատկապես որ ստեղծագործություններն են հետաքրքրում երեխաներին: Ուսուցիչների պատասխաններում գերակշռում էին հանելուկները. նրանք գտնում են, որ հանելուկներնը աշակերտների մեջ զարգացնում են որոնողական, ճանաչողական, վերլուծական, տրամաբանական, ստեղծագործական կարողություններ:

Հաջորդ հարցով նպատակ ունեինք պարզելու թե հատկապես ո՛ր ստեղծագործությունը կնպաստի գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը: Բացարձակապես բոլորը փաստել էին, որ առածների ու ասացվածքների միջոցով կարելի է հասնել այդ արդյունքին:

Մյուսը բաց հարց էր՝ նշել այնպիսի միջոցներ, որոնցով կարող ենք զարգացնել գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրություն: Մեծամասնությունը նշել էին տարատեսակ մեթոդներ՝ փոխներգործուն, խաղային, դերային խաղերի, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, քննարկումների, բանավեճերի կազմակերպման միջոցով: Ես ինքս թե՛ պրակտիկայի, թե՛ հետազոտական աշխատանքիս շրջանակներում կիրառել եմ այն միջոցներն ու հնարները, որոնք փաստել էին մի շարք դասվարներ: Ըստ իս՝ այդ ամենի ճիշտ և տեղին կիրառումը կարող է նպաստել գեղարվեստական խոսքի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը:

Հարցաթերթիկում ընդգրկված մյուս հարցը նպատակ ուներ պարզելու թե ուսուցիչները որքան հաճախ են կիրառում խոսքի զարգացման նպատակով հանելուկներ սուտասելուկներ հորինելու առաջադրանքներ և ինչ արդյունք են ունենում դրանով: Ուսուցիչները նշել էին, որ աշխատանքի այս ձևը խթան է երևակայության, մտածողության, տրամաբանության, պատկերավոր, նկարագրական խոսքի զարգացման համար: Այս գործընթացն օգնում է սովորողին ինքնուրույն խոսք կառուցելու, ստեղծագործելու, հատկանիշները տարբերակելու, էականը գտնելու, հանգավորելու, ընդհանրացնելու կարողություն: Նշեցին, որ երեխաները մեծ հետաքրքրությամբ, սիրով և ոգևորությամբ են մասնակցում հանելուկ հյուսելու գործընթացին, հատկապես մեծ սիրով են կատարում թեմատիկ

աշխատանք՝ ծաղիկների, մրգերի, կենդանիների, տարվա եղանակներին նվիրված հանելուկների հորինման աշխատանքին:

Ինչպես գիտենք, նկարազարդումներն իրենց կարևոր դերն ունեն երեխայի՝ գեղարվեստական խոսքի հետաքրքրության առաջացման, ճաշակի զարգացման գործում: Հաջորդ հարցը հենց նկարազարդմանն էր վերաբերվում: Մեծամասնությունը նշել էին, որ շատ է նպաստում: Դասվարներից 4-ը նշել էին << քիչ է նպաստում>> տարբերակը, 10-ը <<շատ է նպաստում>>տարբերակը, իսկ <<չեն նպաստում>> տարբերակը բացառել էին բոլորը:



Հաջորդ հարցով ցանկացել էի պարզել կրտեսեր դպրոցականների ճաշակի զարգացմանը, բացի նկարազարդումներից, ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները կարո՞ղ են նպաստել, թե՞ ոչ: Գերիշխում էր <<շատ է նպաստում>> տարբերակը՝ 12 պատասխան, <<քիչ է նպաստում>> տարբերակը նշել էին 2 դասվար, <<չի նպաստում>> տարբերակը բացառված էր բոլորի կողմից:

Մյուս հարցը վերաբերվում էր ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ընձեռած հնարավորություններին: 9 դասվարներ նշել էին, որ ընձեռում է <<լայն հնարավորություններ>>, <<բավարար հնարավորություններ>> տարբերակները նշել էր 5 դասվար,<<սահմանափակ հնարավորություններ>> և

<<բոլորովին չի ստեղծում>> տարբերակից նշումներ չունեինք: Դասվարներից մի քանիսը մեկնաբանեցին իրենց՝ այս տարբերակի վերաբերյալ պատասխանները. քանի որ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները հարուստ են գեղեցին նկարագրություններով, հակադրություններով, փոխաբերություններով, այլաբանություններով, երեխան՝ կարդալով ժողովրդական ստեղծագործությունը, ինքնընստինքյան երեխայի հետաքրքրություններն ավելանում է գեղարվեստական խոսքի, բանաստեղծության, պամվածքի, հեքիաթի նկատմամբ, այդ իսկ պատճառով ստեղծում է լայն հնարավորություններ:



Այն հարցին, թե գեղարվեստական ճաշակի զարգացման գործում ժողովրդակա՞ն, թե՞ հեղինակային ստեղծագործություններն են նպաստում, հարցմանը մասնկացած ուսոցիչներից գրեթե բոլորը կարծում են, որ ժողովրդական ստեղծագործություններն առավել նպստում են երեխայի գեղագիտական ճաշակի ձևավորմանը՝ երեխային մոտ պահելով ժողովրդական բառ ու բանին:

Գեղարվեստական ճաշակի զարգացման գործում ժողովրդական ստեղծագործությունների հատկանիշներից առանձնացրել էին հասկանալի լեզու ունենալը, պատկերավոր նկարագրությունները, ազգային արժեքների բնութագրումները, նկարագրական խոսքը, համեմատությունները, այլաբանությունները՝ փաստելով որ այս հատկանիշները կարող են խթան լինել ճաշակի զարգացման գործում:

Վերջին հարցով ցանկացել էինք պարզել, թե հատկապես ո՛ր ժողովրդական մանրապատում ստեղծագործությունը կարող է զարգացնել երեխաների ճանաչողական գիտելիքները: Հարցմանը մասնակցած ուսուցիչներից 7-ը նշել էր հանելուկները, մյուս 7-ը՝ առածներն ու ասացվածքները: Կային ուսուցիչներ, որոնք այս հարցին պատասխանելու համար այս երկու տարբերակների մեջ չէին կողմնորոշվում և ցանկանում էին նշել երկու տարբերակներն էլ միաժամանակ: Այս փաստից ելնելով կարող ենք ասել, որ մեր կարծիքով՝ ճանաչողական գիտելիքների զարգացմանը հատկապես նպաստում են հանելուկները, առածներն ու ասացվածքները:

Մայրենիի ուսուցման գործընթացում աշակերտների մեջ ձևավորվում է աշխարհն ամբողջական տեսնելու, բազմաբնույթ մտածելու, որոնելու, վերլուծելու, համադրելու կարողություններ, այնպիսի որակներ, որոնք հնարավորություն են տալիս ճիշտ և տեղին օգտագործելու ձեռք բերված գիտելիքները, աշխարհաճանաչողությունը, ստեղծագործելու կարողությունը, որոնք օգնում են սովորողին լինել բանիմաց, մտածող, պրպտող, վերլուծող, նպատակասլաց, համագործակցող:

Հարցաթերթիկի միջոցով կատարված հետազոտության արդյունքներից ելնելով կարող ենք ընդհանրացնել, որ կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը մանրապատում ստեղծագործության միջոցով նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը, ուսուցանվող նյութի յուրացման, մտապահման մակարդակի բարձրացմանը, աշակերտների աշխարհայացքի կերտմանը, գիտելիքների ձեռքբերմանը, որն օգնում է աշխարհն ընկալելու որպես մեկ ամբողջություն: